ՍՄԿՊ ԿԿ և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի հղած ողջույնի հետևյալ տողերը, որտեղ արժանի կերպով գնահատվում են հայ ժողովրդի ծառայությունները Հայրենական Մեծ պատերազմում. «Հայրենական պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հայ զինվորները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ մեկտեղ, անձնազոհ կերպով պաշտպանում էին մեր Հայրենիքի անկախությունը և ազատությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անգնահատելի ջանք էին թափում թշնամուն հաղթելու համար» (էջ 309)։

Գրախոսվող աշխատությունը գրական կողմերի հետ մեկտեղ ունի մի շարք թերություններ ու վրիպումներ։ Նախ և առաջ պետք է խոսել պարբերացման մասին։ Զարմանալի է, թե ինչու ուրվագծերի ավյալ պրակը սկսվում է 1935 թվականից։ Հայտնի է, որ առաջին հինգամյակն ընդգրկում էր 1928—1932 թվականները, իսկ 1933 թվականից մեր ժողովրդի պատմության մեջ սկսվեց նոր շրջան՝ երկրորդ հնգամյակի կատարման համար մղվող պայքարի շրջանը։ Ուստի ուրվագծերի ավյալ պրակը պետք է ընդգրկեր երկրորդ հնգամյակի ողջ շրջանը (1933—1937), երբ ՍՍՌՄ-ում հիմնականում կատուցվել էր սոցիալիզմը և ընդունվել էր ՍՍՌՄ նոր կոնստիտուցիան և կամ սկսվեր 1938 թվականից։

Գիրքը բավական ծանրաբեռնված է թվական տվյալներով, հատկապես դա վերաբերում է 68,71, 77 էջերին։ 35-րդ էջի տողատակի ծանոթագրությունում, խոսելով Հայաստանում թեթև, սննդի և անտառային արդյունաբերության ժողկոմատների ստեղծման մասին, որպես արխիվային աղբյուր հիշատակվում է «ՀՌՊԿԱ, ֆ.3316, ց. 29, գ.3, էջ 22»։ Անհասկանալի է, թե ո՞ր ՀՌՊԿԱ-ն նկատի ունեն հեղինակները, քանի որ յուրաքանչյուր ուսպուբլիկա ունի Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության Պետական կենտրոնական արխիվ։ Եթե նա նկատի ունի Հայկական ՍՍՌ ՀՌՊԿԱ-ն, ապա այնտեղ ֆոնդերի քանակը 600-ից ավելի չէ, ուստի № 3316 ֆոնդ լինել չի կարող։ Ինչպես հեղինակները, այնպես էլ խմբագիրները չեն նկատել 310 էջում թույլ տրված սայթաքումը, որտեղ նշված է՝ «Հայկական ՍՍՌ-ն երրորդ հնգամյակի նախապատրաստման տարիներին (1938—1941)»։ Հավանորեն պետք է լիներ՝ «Հայկական ՍՍՌ-ն նախապատերազմյան տարիներին (1938—1941)»։ 261 էջի տողատակի ծանոթագրությունում սխալ է թույլ տրված. «Պրավդա», մարտի 10, 1944 թ.» փոխարեն պետք է լինի՝ «Պրավդա», 24 հունիսի, 1944 թ.»։ Մեր կարծիքով, թերի է գրքի 8-րդ գլուխը, որի վերջում բացակայում են ընդարձակ ընդհանրացումներն ու եզրակացությունները։

Թերություն է և այն, որ գրքում բերվում են մի շարք հանրահայտ փաստեր այլ հեղինակների աշխատություններից, բայց աղբյուրները չեն նշվում։ Ընդհանրապես ցանկալի էր գիրքը լրացնել առաջաբանով, որտեղ կարելի էր տալ շարադրված թեմայի վերաբերյալ գրականության համառոտ տեսություն։ Դա անվիճելիորեն կբարձրացներ աշխատանքի գիտական արժեքը։

Բավարար չի կարելի համարել նաև գրքի գիտա-տեղեկատու ապարատը. նա չունի անվանական, առարկայական-թեմատիկ և աշխարհագրական ցանկեր, իսկ գրանք անհրաժեշտ են գիտական հրատարակության համար։

Գիրքն ընդհանուր առմամբ օգտակար է ինչպես գիտական հասարակայնության, այնպես էլ ընթերցողների լայն շրջանների համար։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լ. Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, *Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից*. Մարքսիզմ-լենինիզմի մի քանի հարցերը հայ բոլշևիկյան մամուլում: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1959, 230 էջ, գինը 8 ռ.:

Մարքսիզմի՝ պրոլետարիատի ազատագրական պայքարի մեծ ուսմունքի, տարածումն ամեն մի երկրի կյանքում քաղաքական ու գաղափարական մեծագույն իրադարձություն է։ Պատմությունից հայտնի է, որ այս կամ այն դասակարգի գաղափարախոսների կողմից մշակված ուսմունքները անցնում են մի երկրից մյուսը և համապատասխան փոփոխություններով ծառայում տարբեր երկրների սոցիալական ուժերին։ Բայց պատմությանը հայտնի չէ ուրիշ ոչ մի ուսմունք, որն ունենար այնպիսի տարածում բովանդակ աշխարհում, ձեռք բերեր այնպիսի ազդեցություն տարբեր ժողովուրդների գաղափարական կյանքի և հասարակական շարժ-

ման վրա, համախմբեր իր դրոշի տակ ժողովրդի այնպիսի հոծ զանգվածներ, ինչպես մարքսիզմը։ Եվ դա բնական է. մարքսիզմը խորապես ինտերնացիոնալիստական ուսմունք է, որն արտահայտում է բոլոր երկրների պրոլետարիատի և ամբողջ աշխատավոր ժողովրդի շահերը, լուսավորում է ազատագրական պայքարի ուղին ու հեռանկարը, պրոլետարիատի շուրջը համախմբում բոլոր առաջադեմ ուժերը մարդկության պայծառ ապագայի համար մղվող պայքարում։ Եվ ամենուրեք, ուր հասարակական կյանքում ստեղծվում են պայմաններ սոցիալիստական շարժման համար, ուր պրոլետարիատը հանդես է գալիս որպես պայքարի առաջամարտիկ, իր տարածումն է գտնում մարքսիզմը, միանում տվյալ երկրի բանվորական շարժման հետ, ընդ որում յուրաքանչյուր երկրում այդ միացումը տեղի է ունենում յուրահատուկ պատմական պայմաններում ու յուրահատուկ կերպով։

Վ. Ի. Լենինը ցույց է տվել, թե ինչ հանգամանքների, դժվարությունների ու յուրահատկությունների հետ էր կապված մարքսիզմի տարածումը Ռուսաստանում, այն երկրում, ուր ռևոլյուցիոն այդ մեծ ուսմունքը ոչ միայն յուրացվեց հասարակական առաջադեմ ուժերի կողմից, այլև գտավ իր հետագա խոր զարգացումն ու հարստացումը և առաջին անգամ, շնորհիվ հաղթանակած սոցիալիստական ռևոլյուցիայի, դարձավ տիրապետող գաղափարախոսություն։ «Մոտ կես դարի ընթացքում,— գրել է Վ. Ի. Լենինը,— անցյալ դարի մոտավորապես 40-ականից մինչև 90-ական թվականները, Ռուսաստանում առաջադեմ միտքը, չտեսնված վայրենի ու ռեակցիոն ցարիզմի ճնշման տակ, ագահությամբ որոնում էր ռևոլյուցիոն ճիշտ թեորիա, զարմանալի ջանասիրությամբ և խնամքով հետևելով Եվրոպայի ու Ամերիկայի ամեն տեսակ և յուրաքանչյուր «վերջին խոսքին» այդ բնագավառում։ Մարքսիզմը, որպես միակ ճիշտ ռևոլյուցիոն թեորիա, Ռուսաստանն իսկապես որ ձեռ է բերել շարչարանքով, անլուր տանջանքների ու զոհերի, չտեսնված ռևոլյուցիոն հերոսության, անհավատալի եռանդի ու անձնվեր որոնումների, ուսման, պրակտիկայում փորձելու, հիասթափումների, սուուգման, Եվրոպայի փորձի զուգադրման կեսդարյան պատմությամբ» (Երկեր, հատ. 31, էջ 10—11)։ Այս տողերի մեջ ամփոփված է Ռուսաստանի ռևոլյուցիոն մտքի պատմության մի ամբողջ ժամանակաշրջան, որի առանցքը կազմում էր ռևոլյուցիոն ճիշտ տեսության որոնումը և որի արդյունքը այդպիսի տեսության ձևք բերումն էր։

Հայաստանում մարքսիզմի տարածումը ճիշտ հասկանալու, ուսումնասիրելու ու պարզաբանելու համար լենինյան այս մտքերն ունեն սկզբունքային նշանակություն ոչ միայն այն պատճառով, որ ամեն մի երկրում մարքսիզմի տարածումը բնութագրվում է որոշակի ընդհանուր նախադրյալներով ու գծերով, այլև այն պատճառով, որ Հայաստանում մարքսիզմի տարածումը անմիջականորեն ու օրգանապես կապված է եղել նրա տարածման հետ Ռուսաստանում, որ մարքսիզմի իսկական կրողները, տարածողները և կենսագործողները Հայաստանում գործել են Ռուսաստանի բոլոր ժողովուրդների միասնական ռևոլյուցիոն շարժման բովում, բոլշևիկյան պարտիայի շարքերում, նրա հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։

Հայաստանում մարքսիզմի տարածման ուսումնասիրությունն սկսված է վաղուց, և այդ բնագավառում զգալի աշխատանք է կատարված։ Բազմաթիվ գրքերում ու հոդվածներում քննարկված են պատմական այդ իրադարձության կարևորագույն մոմենտները, մարքսիստական գրականության հայերեն թարգմանությունների հանգամանքները, ռևոլյուցիոն խմբակների, հայ ականավոր ռևոլյուցիոն գործիչների դերը և, որ գլխավորն է, բոլշևիկյան պարտիայի գործունեությունը այդ բնագավառում։ Սակայն Հայաստանում մարքսիզմի տարածման հանգամանալից լուսաբանությունը, որը պատմաբաններից, փիլիսոփաներից, տնտեսագետներից համառ աշխատանք ու քրտնաջան հետազոտություններ է պահանջում, դեռևս սպասում է իր իրականացմանը։ Ուստի այդ բնագավառում ամեն մի նոր հետազոտություն և ամեն մի լուրջ քայլ արժանի է ուշադրության և խրախուսանքի։ Այդ տեսակետից ողջունելի է և Լ. Հ. Աբրահամյանի սույն աշխատության հրատարակումը։

Աշխատության նպատակի և ուսումնասիրության սահմանների վերաբերյալ գրքի «Առաջաբանում» ասված է. «Հնդինակը հավակնություն չունի սպառիչ կերպով լուսաբանելու Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման հարցը։ Մեր ուսումնասիրության առարկան գիտական սոցիալիզմի գաղափարների պատմությունը չէ, այլ այն, թե այդ պրոցեսում ինչպես էին բացատրվում, պարզաբանվում և մշակվում տեսական պրոբլեմները։ Ըստ որում այդ պրոբլեմների ամբողջությունից այստեղ առանձնացված են երկու առավել կարևորները՝ ռևոլյուցիայի և ազգային հարցերը»։ Բացի դրանից գիրքն ունի հատուկ գլուխ՝ «Մարքսիզմի տարածման նախադրյալները», որտեղ համառո-

տակի ուրվագծված են Հայաստանում պրոլետարական դաղափարների տարածման տնտեսական, քաղաքական ու դաղափարական նախադրյալները (էջ 6,7)։ Հետևաբար աշխատությունը, թեև նպատակ չի դնում հետաղոտելու մարքսիզմի տարածման պատմությունն ամբողջապես, բայց ընդգրկում է շատ կարևոր բնագավառ գիտական սոցիալիզմի մի քանի պրոբլեմների պաշտպանումն ու մշակումը բոլշևիկյան մամուլում (և դա, իհարկե, չնայած հեղինակի վերապահությանը, դիտական սոցիալիզմի դաղափարների պատմությանն է վերաբերում)։

«Մարքսիզմի տարածման նախադրյալները» գլխում հեղինակը համառոտակի շարադրում է կապիտալիստական հարաբերությունների կազմավորման պրոցեսը Հայաստանում և ցույց է տալիս դրա հետևանքները։ Հիշտ է վարվում հեղինակը այդ պրոցեսը դիտելով որպես Ռուսաստանում և Անդրկովկասում կապիտալիզմի զարդացման մի օղակ։ «Հայաստանում գյուղացիության քայքայումն ու արտադնացությունը այնպիսի տեմպերով էին զարդանում,— գրում է հեղինակը,— որ տեղական արդյունաբերությունը չէր կարողանում կլանել քաղաքում վաստակ որոնող ամբողջ մասսային։ Այդ պատճառով էլ Հայաստանի գյուղացիությունը աշխատանք էր փնտրում Անդրկովկասի խոշոր կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում» (էջ 17)։ Այս հանգամանքը տվյալ թեմայի կապակցությամբ կարևոր է այն տեսակետից, որ մարքսիզմի տարածումը Հայաստանում չի կարելի քննարկել ելնելով միայն նրանից, թե ինչ էր արված բուն Հայաստանի տերիտորիայում, որովհետև հայ բանվորների մի սվաղ խավ գտնվում էր Հայաստանից դուրս, մյուս ազգերի բանվորների հետ մեկտեղ մասնակցում էր ռևոլյուցիոն շարժմանը և նրանց հետ միասին էր յուրացնում ու կենսագործում մարքսիստական ուսմունքը։

Ընդգծելով, որ մարքսիզմի տարածման ռեալ նախադրյալը բանվորական շարժումն է, հեղինակը կանգ է առնում նաև մարքսիզմի տարածման այսպես կոչված նախապատմության վրա։ Նա ցույց է տալիս, որ հայ հասարակական մտքի տարբեր հոսանքները, պահպանողական ու լիբերալ մամուլը Հայաստանում կապիտալիզմի զարդացման կապակցությամբ քննարկում էին այնպիսի պրոբլեմներ, որոնք մարքսիստական ուսմունքի մեջ էական տեղ են գրավում, և այսպես թե այնպես իրենց վերաբերմունքն էին ցույց տալիս այդ պրոբլեմների (հատկապես տնտեսադիտական հարցերի) մարքսիստական լուծմանը։ Հայաստանում «կապիտալիզմի բախտի» և նման այլ հարցերի դնելն արդեն իսկ ուներ կարևոր նշանակություն, բայց, ինչպես նշում է հեղինակը, դրանք չէին կարող գիտական լուծում ստանալ այդ հոսանքներից և ոչ մեկի կողմից, որովհետև վերջիններս արտահայտում էին իրենց ծնող դասակարդերի նեղ շահերը և ջանում էին մարքսիզմը հարմարեցնել իրենց նպատակներին։

Գնահատելով հնչակյան պարտիայի որոշ գործիչների դրական դերը մարքսիստական մի քանի աշխատություններ թարգմանելու և հրատարակելու գործում, հեղինակը միաժամանակ ընդգծում է, որ մարքսիզմի դրույթները խոր հակասության մեջ էին այդ պարտիայի պրակտիկ ու դաղափարական գործունեության հետ ու այդ պարտիայի պառակտման պատճառներից մեկը եղան։ Հեղինակը ճիշտ է բացատրում հայ բուրժուազիայի դաղափարական էվոլյուցիան։ Քանի դեռ բանվորական շարժումը վտանդավոր չէր բուրժուազիայի և մյուս շահագործող դասակարդերի համար, դրանց դաղափարախոսները կարող էին զբաղվել և զբաղվում էին կապիտալիզմի քննադատությամբ, խոսելով նրա «անցանկալի հետևանքների» մասին, քննարկելով բանվորական հարցը և անգամ հետաքրքրվելով մարքսիզմով։ Գործն այլ ընթացք է ստանում, երբ բանվորական շարժումը ստանում է ինքնուրույն բնույթ, և հանդես են գալիս մարքսիզմի իսկական կրողները։ «Հայ բուրժուազիան,— գրում է հեղինակը,— հրաժարվեց հայ դեմոկրատական մտքի նվաճումներից և դրական ավանդ չմտցրեց նոր ժամանակների պրոբլեմների բմբռնման մեջ, երբ ֆեոդալների ու կղերականների դեմ մղվող պայքարը երկրորդ պլանն անցավ» (էջ 26)։

Աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ Հայաստանում մարքսիզմի տարածումն սկսվեց հայ ժողովրդի ազգային մասնատվածության ու ազդային ճնշման պայմաններում։ Այդ կապակցությամբ ցույց է տրվում, որ հայ բուրժուազիան, «ազգի փրկության» ֆրազի տակ ծածկելով իր դեմքն ու սեփական շահերը, իրականում ձգտում էր ազատվել օտար կապիտալի մրցակցությունից, հատուկ տեղ տալով այդ տեսակետից Արևմտահայաստանին։ Այստեղից էլ բխում էր նրա վերաբերմունքը ռուսական ցարիզմի նվաճողական քաղաքականության նկատմամբ։ Հայ բուրժուազիան ոչինչ չուներ այդ քաղաքականության դեմ,— գրել է Շահումյանը։ Արևմտահայաստանը նվաճելու դեպքում նրա առաջ կբացվեր նոր ասպարեզ անսահման շահագործման համար, իսկ անհաջողության դեպքում նա համենայն դեպս հույս ուներ, որ կշահի ռուսական կառավարության

սիրաը և կվայելի նրա հովանավորությունը Կովկասում։ Դրանից էր ելնում հայ բուրժուազիայի պարտիան՝ դաշնակցությունը իր նացիոնալիստական քարոզներով և ավանտյուրիստական գործունեությամբ։ Այդ պարտիան ջանում էր հայ աշխատավորներին թույլ չտալ մասնակցելու Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիոն պայքարին և նրանց մեկուսացնել հարևան ժողովուրդների ռևոլյուցիոն շարժումից Անդրկովկասում։ Հեղինակն ընդգծում է դաշնակցության ազգայնամոլական քարոզների վնասակարությունը հատկապես այն տեսակետից, որ ռևոլյուցիոն շարժման կենտրոնը XIX դարի վերջերին փոխադրվել էր Ռուսաստան, իսկ պրոլետարիատի պայքարը դարձել էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների կյանքի վճռական գործոնը, նրանց սոցիալական ու ազգային ազատագրման միակ հուսալի երաշխիքը (էջ 39—40)։ Դաշնակցության գաղափարախոսությունը և ամբողջ գործունեությունը, որ չարիք դարձավ ողջ հայ ժողովրդի համար, ուղղված էին հայ բանվորների ինքնագիտակցության զարգացման, մարքսիզմի տարածման և հայ ժողովրդի ազատագրական պայքարի դեմ։ Մարքսիզմը Հայաստանում տարածվել, ամրապնդվել և անհաղթահարելի գաղափարական ուժ է դարձել ռևակցիոն գաղափարախոսության, հատկապես դաշնակցության, գաղափարախոսության դեմ մղված պայքարում։

Քննարկվող աշխատության մեջ ցույց է տրվում, որ բանվորական շարժման հիման վրա առաջացան առաջին մարքսիստական խմբակներն ու կազմակերպությունները հայ բանվորների շրջանում և բուն Հայաստանի տերիտորիայում։ Հեղինակն ընդգծում է ականավոր մարքսիստ ու բոցաշունչ ռևոլյուցիոներ Ստ. Շահումյանի դերը մարքսիզմի տարածման և հաստատման գործում։ Այդ բնագավառի համարյա բոլոր ձեռնարկումների նախաձեռնողն ու կազմակերպիչը Շահումյանն էր. «Նրա աշխատությունները, որոնք գրված են մարքսիստական տեսության ու հայկական իրականության առանձնահատկությունների խոր իմացությամբ, մտնում են հայերեն լեզվով ստեղծված սոցիալիստական գրականության ոսկե ֆոնդի մեջ։ Ստ. Շահումյանը, հայ աշխատավորների շրջանում աշխատող ռևոլյուցիոներների և հրապարակախոսների պլեադայի հետ միասին, հայ հասարակական մտքի պատմության մեջ նոր, մարքսիստական էտապի հիմքը դրեց» (էջ 54)։

Աշխատության մեջ փաստական տվյալներ են բերվում, թե ինչպես մեր դարի սկզբում տարեցտարի ծավալվում է մարքսիստական գաղափարների պրոպագանդան, ինչպես լենինյան իսկրայական կազմակերպությունների կողմից դեկավարվող ռևոլյուցիոն աշխատանքը ավելի ու ավելի ինտերնացիոնալիստական բնույթ է ստանում։ Գրքում տրվում է հայ սոցիալ-դեմոկրատների «Մանիֆեստի» նշանակությունը, նրա գնահատականը Լենինի կողմից։ Հեղինակը հետազոտելով մարքսիզմի գաղափարների տարածման պրոցեսը, կարևոր հետևություններ է անում այն մասին, որ դա գառնում է ոչ թե միայնակ անձնավորությունների կամ առանձին խմբակների, այլ պարտիայի, նրա ինտերնացիոնալիստական կազմակերպությունների գործը. մարքսիզմի գաղափարները Հայաստանում պայքարում են՝ պարզապես լուսավորական գործոն լինելուց, գառնում են ռևոլյուցիոն աշխատանքի տեսական հիմքը, հասարակության ռևոլյուցիոն վերափոխման անփոխարինելի զենքը, ռևոլյուցիոն պայքարի մարտական ծրագիրը։

«Ռևոլյուցիայի պրոբլեմները» գլխում հեղինակը հենվելով հատկապես հայ բոլշևիկյան մամուլի («Կայծ», «Նոր խոսք», «Կոչ», «Օրեր» և այլն) նյութերի վրա, ցույց է տալիս, որ ռևոլյուցիոն պայքարի ծավալմանը զուգընթաց, հատկապես 1905—1907 թթ. ռևոլյուցիայի տարիներին, Հայաստանում մարքսիզմի գաղափարները խոր տարածում են գտնում։ Ռևոլյուցիայի տարիներին բնականաբար առաջին պլանի վրա է մղվում մարքսիստական ուսմունքը ռևոլյուցիայի մասին։ Հետազոտելով հայ բոլշևիկյան մամուլում հրապարակված հարուստ նյութը ռևոլյուցիայի մասին, հեղինակը նախ ցույց է տալիս, որ այդ պրոբլեմը քննարկվում էր տեսական լայն առումով և երկրորդ, անմիջական պրակտիկ ռևոլյուցիոն գործունեության հետ շաղկապված։ Հայ մարքսիստների, հատկապես Ստ. Շահումյանի հոդվածներում ու աշխատություններում ռևոլյուցիայի պրոբլեմների վերլուծությունը խարսխված էր մարքսիստական փիլիսոփայության արմատական դրույթների, հասարակության զարգացման օրինաչափության գաղափարների վրա։ Հեղինակը շարադրում է Ստ. Շահումյանի «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ», «Էվոլյուցիոնիզմը ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» աշխատությունների հիմնական գաղափարները, տալիս նրանց գնահատականը՝ որպես մարքսիստական ուսմունքի ստեղծագործական պրոպագանդայի օրինակներ, Անդրկովկասի պայմաններում պրոլետարիատի շարժման ձեռք բերած գաղափարական պայքարի բարձր տեսական աստիճանի արտահայտություն, լենինյանների պրակտիկ ու տեսական գործունեության խոր միասնության արտահայտություն (էջ 114)։ Գրքում լայնորեն օգտագործված են

Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի այն հոդվածները, որոնք վերաբերում են տվյալ թեմային։

Հայաստանում մարքսիզմի տարածումը համընկավ այն ժամանակաշրջանին, երբ ռևոլյուցիոն շարժումների կենտրոնը տեղափոխվել էր Ռուսաստան, որը դարձավ լենինիզմի հայրենիքը։ Հայ մարքսիստները տարածելով մարքսիզմը Հայաստանում, լուսաբանում, պրոպագանդում և կենսագործում էին դրանք՝ ելնելով Լենինի հանճարեղ աշխատություններից, հենվելով նրա մշակած այն դրույթների վրա, որոնց մեջ խորապես ամփոփվում և ընդհանրացվում էր ռուսական և միջազգային ռևոլյուցիոն շարժման նոր փորձը, զարգացվում էր ռևոլյուցիայի մարքսիստական ուսմունքը, ջախջախիչ քննադատության ենթարկվում հակամարքսիստական ու ռևիզիոնիստական կոնցեպցիաներն ու դաղափարները։ Գրախոսվող աշխատության մեջ այս ամենը իր արտացոլումն է գտնում, ինչպես և ցույց է տրվում, թե ինչպիսի ուշադրությամբ էր Լենինը հետևում մարքսիզմի տարածմանը Անդրկովկասում, մարքսիստական գրականության թարգմանությանը Անդրկովկասի ժողովուրդների լեզուներով և այլն։ Բայց ցանկալի էր, որ հեղինակն ավելի խոր ընդհանրացումներ կատարեր և ավելի հստակ բնութագրեր մարքսիզմի զարգացման լենինյան էտապը տվյալ թեմայի կապակցությամբ՝ տեքստում և ամփոփիչ բաժնում, ինչպես և ցույց տար հայ ականավոր մարքսիստների գաղափարական ու պրակտիկ գործունեության նշանակությունը ոչ միայն Հայաստանի, այլև համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժման համար։

«Ազգային հարցը» գլխում հեղինակը ընդգծում է այդ հարցի կարևորությունը տվյալ թեմայի կապակցությամբ։ «Քանի որ,— գրում է նա,— հայկական միջավայրում մարքսիզմի տարածման և ռևոլյուցիոն շարժման ծավալման գլխավոր խոչընդոտը նացիոնալիզմն էր, ազգային հարցի վերաբերյալ քաղաքական պայքարն ստանում էր հատուկ սրություն, ընդ որում այդ բնագավառում տեսական պրոբլեմների այս կամ այն լուծումը անմիջականորեն կապված էր ազգային հարցում պրակտիկ քաղաքական գծի հետ» (էջ 163)։ Հեղինակը ըստ արժանվույն գնահատում է հայ ականավոր մարքսիստների ծառայությունը ազգային հարցի լուծման ու լուսաբանման գործում և նրանց պրակտիկ գործունեությունը հայ ժողովրդի մեջ ինտերնացիոնալիզմի գաղափարների սերմանման ու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։ Աշխատության մեջ մեծ տեղ է տրված այն պայքարին, որ մղել են հայ կոմունիստները նացիոնալիստական ուսմունքների ու նրանց իդեալիստական ու մետաֆիզիկական հիմունքների դեմ։ Հեղինակն ընդգծում է, որ միայն պրոլետարական աշխարհայացքի ներկայացուցիչների կատարած հսկայական աշխատանքի հետևանքով հնարավոր դարձավ ըստ արժանվույն գնահատել հայ ժողովրդի վիթխարի կուլտուրական ժառանգությունը, վեր հանել հայ գրականության, արվեստի, հասարակական մտքի մեջ եղած դեմոկրատական տրադիցիաները, որոնք անհրաժեշտ նախադրյալ են սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ու հաստատման համար։ Մարքսիզմ-լենինիզմի տարածումը Հայաստանում նախորդեց հայ ժողովրդի փրկությանը սոցիալական ու ազգային տառապանքներից ու ֆիզիկական բնաջնջումից։

Քննարկվող աշխատությունը զերծ չէ թերություններից։ Կանգ չառնելով ոչ էական բացերի վրա, նշենք, որ հեղինակը փորձ չի անում գնահատելու այն գրականությունը, որն այս կամ այն չափով կամ անմիջապես վերաբերում է տվյալ թեմային։ Մինչդեռ դա շատ կարևոր խնդիր է։ Խրախուսելի է, որ հեղինակը հաճախ վկայակոչում ու հիշատակում է այն աղբյուրները, որոնք առնչվում են տվյալ թեմայի հետ, և նշում է, թե ի՞նչ հարցեր են այնտեղ պարզաբանվում կամ արծարծվում։ Բայց, դժբախտաբար, հեղինակը համարյա ցույց չի տալիս իր վերաբերմունքը դրանց նկատմամբ։ Բերենք մի օրինակ։ 45-րդ էջի ծանոթագրության մեջ ասվում է, որ «Հայ բանվոր ռևոլյուցիոներների ասոցիացիայի» վերաբերմամբ եղել են և կան տարբեր տեսակետներ և որ ինքը հիմնականում հենվել է պատմաբան Վ. Ավետիսյանի ուսումնասիրության վրա։ Բայց հեղինակը ցույց չի տալիս, թե ուրիշ ի՞նչ տեսակետներ կան և որո՞նք են դրանց սխալները։ Իսկ դա անհրաժեշտ էր հենց տվյալ թեմայի կապակցությամբ։

Գրքում կան որոշ դրույթներ, որոնք առարկություն են հարուցում։ Հիշատակենք մի քանիսը։ «Հայ ժողովուրդը, որը դեռ ոչ հեռավոր անցյալում ապրում էր ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգի տակ, Ռուսաստանին միացվելուց հետո մի քանի տասնամյակի ընթացքում ազատվեց իր նախկին «հոգևոր հայրերի»՝ կղերա-ֆեոդալական շրջանների գաղափարական հեգեմոնիայից» (էջ 10)։ Սա չափազանցություն է։ Հանրահայտ է ռուս առաջավոր կուլտուրայի դերը հայ կուլտուրայի զարգացման համար, ինչպես և Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միանալու դրական արդյունքը։ Բայց այն ժամանակ Ռուսաստանում տիրապետող ֆեոդալական իդեոլոգիայի պայմաններում հնարավոր չէր հայ ժողովրդի ազատվելը ոչ իր և ոչ էլ օտար տիրակալների ռեակցիոն գաղափարների տիրապետությունից։ Մի այլ առիթով հեղինակը գրում է. «XIX դարի

վերջը հայ հասարակական մտքի պատմության մեջ նշանավորեց բուրժուական գաղափարախոսության վախճանի սկիզբը» (էջ 44)։ Սա նույնպես չափազանցություն է. XIX դարի վերջին դեռևս մարքսիզմը նոր էր մուտք գործում Հայաստան, իսկ ուրիշ ոչ մի գաղափարախոսություն չէր կարող նշանավորել բուրժուական գաղափարախոսության «վախճանի սկիզբը», ընդ որում քանի բուրժուազիան իշխանության գլուխ է կանգնած, նրա հայացքները հասարակության մեջ մնում են տիրապետող։

«Առաջին ռևոլյուցիայի տարիներին,— ասված է 117 էջում,— ռեֆորմիստական տրամադրությունները որոշ տարածում գտան սոցիալ-դեմոկրատական շրջաններում՝ Պետական Դումայի հրավիրման կապակցությամբ, որն առաջ բերեց պառլամենտական և կոնստիտուցիոն պատրանքներ»։ Այստեղ սոցիալ-դեմոկրատական շրջանները հասկացությունն անորոշ է. չէ՞ որ այդ «շրջաններում» էին նաև մենշևիկները, որոնց մեջ ռեֆորմիստական տրամադրությունները ոչ թե «որոշ տարածում գտան», այլ վաղուց էին տարածում գտել ամենալայն չափերով։

Հեղինակը հստակ չի սահմանում հայ պահպանողական և լիբերալ ուղղությունների ու մամուլի տարբերությունները ու նման գծերը։ 21-րդ էջի ծանոթագրության մեջ նա նշում է, որ «պահպանողական ուղղություն» տերմինը և առհասարակ հայ գաղափարական հոսանքների հարցը հատուկ ուսումնասիրության կարիք ունի։ Դա կասկածից դուրս է, բայց ցանկալի էր, որ հեղինակը ավելի պարզորոշ արտահայտեր իր կարծիքը տվյալ հարցի կապակցությամբ, մանավանդ, որ այդ ուղղությունների տարբերության հարցը ինքը մասնակիորեն շոշափում է։

Լ. Աբրահամյանի «Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից» աշխատությունը ուշագրավ և արժեքավոր գործ է։ Նա պարունակում է փաստական հարուստ նյութ, կարևոր ամփոփումներ ու ընդհանրացումներ, որոնցից հատկապես կարելի է ընդգծել այն դրույթը, որ մարքսիզմի տարածումը Հայաստանում, ինչպես և ամենուր, ռևոլյուցիա էր փիլիսոփայական և հասարակական քաղաքական մտքի մեջ, որի համար օբյեկտիվ նախապայմաններ էին ստեղծվել և որը իր անփոխարինելի դերը կատարեց, որպես ռևոլյուցիոն պայքարի ուղեցույց ու ծրագիր։

Ա. Հ.

Խ. Հ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ, *Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917)*. Հայպետհրատ, 1959, 442 էջ, գինը 6 ռ. 60 կ.։

Հեղինակը բարեխղճությամբ հավաքել է բազմաթիվ արխիվային, տակավին չհրատարակված նյութեր՝ պատկերելու համար մեր ժողովրդի կյանքի մռայլ անցյալը։ Նրան հիմնականում հաջողվել է բավական հանգամանորեն ուրվագծել XIX դարի և XX դարի առաջին տասնամյակի Արևելյան Հայաստանի հողային հարաբերությունների պատկերը։

Առաջին էական հարցը, որ զբաղեցնում է հեղինակին, այն է, թե ինչ ընդհանուր պատկեր ուներ մեր երկրի բնակչությունը Ռուսաստանի հետ միանալու նախօրյակին և միանալուց անմիջապես հետո։

Ըստ կամերալ ցուցակագրություններից բազած տվյալների, Արևելյան Հայաստանի բնակչություն ունեցող գյուղերի թիվը կազմում էր 857, մինչդեռ գաղթականներով բնակեցված ավերակ գյուղերի թիվը կազմում էր 199, ընդ որում շատ ավերակ գյուղեր դեռ բնակեցված չէին։ Ռուսաստանի հետ միանալու նախօրյակին մեր երկրի գյուղերի առնվազն 25—30%-ը իսպառ անմարդաբնակ ավերակների էր վերածվել։

Ռուսաստանի հետ միանալու նախօրյակին Հայկական Մարզի հայ բնակչությունը կազմում էր ընդհանուր բնակչության 20,8%-ը միայն։ «Մի շարք մահալներում պարսկական տիրապետության վերջին շրջանում հայ բնակչություն համարյա չէր մնացել» (էջ 15)։ «Պատերազմների, բռնի գաղթեցումների, գերեվարությունների, կյանքի և գույքի անապահովության և ակամա արտագաղթի հետևանքով ահագին թվով գյուղեր ավերակների էին վերածվել, հայ բնակչության թիվը ահռելի չափերով նվազել էր» (11)։ Ամբողջ Արևելյան Հայաստանում հայերի տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 33,8%։

Այնուհետև հեղինակը, մանրամասն վիճակագրական տեղեկություններ բերելով, ցույց է տալիս, որ Ռուսաստանի հետ միանալու առա-